ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Բնապահպանության նախարարությունը ստորև ներկայացնում է բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար «Էլեկտրականության բաշխման» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿՊ0058» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի հունվարի 8-ին կնքված «ԿՊ0058-2» ծածկագրով պայմանագրում 2019 թվականի փետրվարի 20-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը::

Փոփոխության պատճառ՝	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պահպանման ծախսերի մասով գործառույթները ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ վերապահվել են ՀՀ վարչապետի աշխատակազմին:
Փոփոխության նկարագրություն՝	Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պահպանման ծախսերի մասով գործառույթները ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ վերապահվել են ՀՀ վարչապետի աշխատակազմին, հետևաբար 2018 թվականի հունվարի 8-ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և բնապահպանության նախարարության միջև «Էլեկտրականության բաշխման» ձեռքբերման նպատակով կնքված «ԿՊ0058-2» ծածկագրով պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ լուծվել է:
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 40-րդ կետի 1-ին ենթակետի հիմքով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ **Լիլիթ Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ **(011) 818-514:**

Էլ. փոստ՝ **gnumner.mnp@yandex.ru:**

Պատվիրատու՝ **բնապահպանության նախարարություն:**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

08.01.2018թ. կնքված թիվ ԿՊ0058-2 էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի լուծման մասին

ք. Երևան
(կնքման վայրը)

«20» 02 2019թ.

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Արմենակյան 127, գրանցման համար՝ 273.140.01857, ՀՎՀՀ՝ 01520882, որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «Մատակարար», ի դեմս գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մի կողմից,

և

ՀՀ Բնապահպանության նախարարությունը, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության հրպ., Կառավարական տուն 3, ՀՎՀՀ՝ 02507198, որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «Սպառող», ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Վ. Ջիլավյանի, ով գործում է նախարարության կանոնադրության և ՀՀ օրենսդրության հիման վրա, մյուս կողմից,

հետագա շարադրանքում միասին անվանվելով «Կողմեր», իսկ յուրաքանչյուրն առանձին՝ «Կողմ», հիմք ընդունելով պայմանագրի 40-րդ կետի 1-ին ենթակետի դրույթները կնքեցին սույն լրացուցիչ համաձայնագիրը (այսուհետ «Համաձայնագիր») հետևյալի մասին.

1. *Կողմերը որոշեցին 2018 թվականի հունվարի 8-ին Կողմերի միջև կնքված թիվ ԿՊ0058-2 էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ լուծված համարել 2019 թվականի հունվարի 1-ից:*
2. *Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ կետի պահանջները՝ Կողմերը հաստատում են, որ Համաձայնագրի պայմանները տարածվում են 2019 թվականի հունվարի 1-ից Կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:*
3. *Համաձայնագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:*
4. *Համաձայնագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:*

Կողմերի հասցեներն ու ստորագրությունները

Մատակարար՝	*Սպառող՝*
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	ՀՀ Բնապահպանության նախարարություն
ք. Երևան, Ա. Արմենակյան 127	ք. Երևան, Հանրապետության հրպ.
	Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 01520882	ՀՎՀՀ 02507198
Լիազորված անձ՝	Գլխավոր քարտուղարի ժ/պ՝
Է. Ղանդինյան	Վ. Ջիլավյան
(ստորագրություն, անուն, ազգանուն)	(ստորագրություն, անուն, ազգանուն)
Կ.Տ.	Կ.Տ.